ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հոկտեմբեր ամսին

«**Սուրբ Ներսես Շնորհալի**» շքանշանով պարգևատրվել է.
Կարապետ Մարգարյան (Արարատյան հայրապետական թեմ)

Օրհնության գիր է տրվել.
Հուսիկ Պետրոսյան (Գեղարքունյաց թեմ)
Գագիկ Գրիգորյան (Արարատեան հայրապետական թեմ)

ԱՅՑ ՄՈՒՄԲԱՅԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ (ԲՈՄԲԵՅ)

Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի ռեգբիի թիմը, որը սույն թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 4-ը գտնվում էր Մումբայ քաղաքում Հնդկաստանի Ռեգբիի առաջնությանը մասնակցելու նպատակով, հոկտեմբերի 3-ը անցկացրեց Մումբայի հայկական Սուրբ Պետրոս եկեղեցում (կառուցված 1796 թ.):

Հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի ղեկավարությամբ հայ ուսանողները լծվեցին եկեղեցու եւ շրջակայքի մաքրման եւ բարեկարգման գործին: Աշխատանքի ավարտին Հայր Խորենի նախագահությամբ եւ ճեմարանականների մասնակցությամբ կատարվեց երեկոյան ժամերգություն:

Երկար դադարից հետո պատմական Սուրբ Պետրոս եկեղեցու կամարների ներքո կրկին հնչեց եւ երկինք վերառաքվեց հայի աղոթքը՝ նոր շունչ պարգեւելով Մումբայի հայկական եկեղեցուն:

Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻԴՆԵՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԱՐՇԱԿ ԵՒ ՍՈՖԻ ԳՈԼՍԹՆ» ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ս. Պատարագի ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրալիայից ժամանած Համազգային «Արշակ եւ Սոֆի Գոլսթն» ճեմարանի սաներին՝ ուղեկցությամբ ճեմարանի տեսուչ Քայլար Միքայելյանի:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց երիտասարդ ուխտավորներին՝ բարձր գնահատելով եւ հաջողություններ մաղթելով նրանց կարեւոր առաքելությանը, որը Հայրենիքի ճանաչողության եւ ազգային ոգու առավել զորացման հրաշալի առիթ է: Հանդիպմանը երիտասարդները Նորին Սրբությանը ներկայացրեցին իրենց տպավորությունները Մայր Հայրենիքից:

* * *

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի պետական համալսարանի 90-ամյակի միջոցառումների եւ «Համալսարանական կրթությունը 21-րդ դարում» միջազգային գիտաժողովի առիթով Հայաստան ժամանած տարբեր երկրների համալսարանների պատվիրակությունների ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի եւ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի:

Ողջունելով գիտնականների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց Երեւանի պետական համալսարանի եւ տարբեր երկրների կրթական բարձրագույն հաստատությունների միջեւ ձեւավորված սերտ համագործակցության եւ բարեկամական կապերի համար: Նորին Սրբությունը նաեւ շնորհավորեց ԵՊՀ ռեկտորին եւ դասախոսներին համալսարանի հոբելյանի առիթով՝ անդրադառնալով համալսարանի կարեւոր առաքելությանը կրթության ոլորտում եւ գիտական մտքի զարգացման գործում ունեցած մեծ ներդրումին:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին Վեհարանի թանգարան, ծանոթացան Հայոց Եկեղեցու գանձերին եւ արժեքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՋԻՆԻՇՅԱՆ» ՀԻՇԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին, որ Հայաստան են ժամանել հիմնադրամի՝ հայաստանյան մասնաճյուղի 15-ամյակի առիթով:

Ողջունելով հյուրերի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց հիմնադրամի անդամներին՝ աշխարհասփյուռ հայ ժողովրդին եւ Հայաստանին օգտակար ծառայություն բերելու համար: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց հիմնադրամի աշխատանքներին Հայոց Եկեղեցու մասնակցության եւ ձեւավորված սերտ համագործակցության համար:

Հիմնադրամի խորհրդի համանախագահներ Մայքլ Հարությունյանը եւ վերապատվե-

լի Վիկտոր Մակարին խորհրդի անունից շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար եւ վստահեցրին, որ հիմնադրամը պիտի շարունակի համագործակցել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հետ:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը արգասավոր աշխատանք եւ բարի արդյունքներ մաղթեց հիմնադրամի գործունեությանը:

Այնուհետեւ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները մասնակցեցին Ս. Պատարագի արարողությանը: Վերջում տեղի ունեցած հոգեհանգստյան պաշտոնի ընթացքում աղոթք բարձրացվեց հիմնադրամի բարերար Վարդան Ջինիշյանի հոգու հանգստության համար:

* * *

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաեւ Ֆրանսիայի Դրովանս-Ալպ-Կոտ դ'Ազյուրի նահանգապետ Միշել Վոզելի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Զարիկ վարդապետ Ավետիքյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը եւ պրն Վոզելը վերհիշեցին Վեհափառ Հայրապետի Հովվապետական այցը Մարսել, ինչպես նաեւ նահանգապետի բազմաթիվ այցերը Հայաստան եւ հայոց հոգեւոր կենտրոն:

Զրույցի ընթացքում կարեւոր նկատվեցին փոխայցելությունները, որոնցով շարունակ նորոգվում են սերը եւ փոխադարձ հարգանքը, զորանում են բարեկամական կապերը եւ համագործակցությունը երկու ժողովուրդների եւ պետությունների միջեւ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՇՄԱՆԴԱՄ ԱՆՁԱՆՑ ԺՈՂՈՎ ԿՐԵՏԵՌԻՄ

Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը Կրետեռում (Հունաստան) տեղի ունեցավ հաշմանդամ անձանց տարածաշրջանային ժողով՝ կազմակերպված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Հաշմանդամների պաշտպանության էկումենիկ ցանցի կողմից:

Ժողովի քննարկման նյութն էր հաշմանդամների մասնակցությունը եկեղեցիների հոգեւոր, ընկերային, տնտեսական ծրագրերին եւ հասարակական կյանքին: Ժողովի նպատակն էր ստեղծել հաշմանդամ անձանց միջտարածաշրջանային ու ազգային ցանցեր եւ նրանց ներգրավել եկեղեցիների ծրագրերում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում էր Մայր Աթոռի աշխատակից տիար Վլադիմիր Սարգսյանը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԵՒ ԷՋՄԻԱԾՆԻ ՔՈՒՅՐ-ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանին եւ Էջմիածնի քույր-քաղաքներ Իսի-Լե-Մուլինոյի (Ֆրանսիա) եւ Պետրոզավոդսկի (Ռուսաստան) ներկայացուցիչներին, ովքեր Հայաստան են ժամանել՝ մասնակցելու Էջմիածին քաղաքի օրվան նվիրված տոնակատարություններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքից հետո Էջմիածնի քաղաքապետն անդրադարձավ քույր-քաղաքների հետ իրականացվող համատեղ ծրագրերին:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը շնորհավորեց ներկաներին Էջմիածնի օրվա կապակցությամբ՝ նշելով, որ հավերժության խորհուրդը պարունակող Էջմիածին քաղաքի տոնը կարեւոր խթան կդառնա ազգային մեր կյանքում քաղաքի դերի ու առաքելության արժեվորման համար: Նորին Սրբությունը նաեւ կարեւոր նկատեց քույր-քաղաքների միջեւ ձեւավորված համագործակցությունը՝ հորդորելով առավել սերտացնել եւ արդյունավորել այդ բարեկամությունը տարբեր ձեռնարկներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ՀԱՎԱՏՔ ԵՒ ԿԱՐԳ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎԸ ԿՐԵՏԵՌԻՄ

Հոկտեմբերի 7-13-ը Հունաստանի Կրետե կղզում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի ժողովը, որի հանդիսավոր բացմանը նախագահում էր Կոստանդնուպոլսի Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը:

Ժողովի ընթացքում քննարկվել են Եկեղեցիներին առնչվող հարցեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին Հայոց Եկեղեցին ներկայացրեցին Անգլիայի հայոց թեմի առաջնորդ, «Հավատք եւ կարգ» հանձնախմբի անդամ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը եւ «Հավատք եւ կարգ» հանձնախմբի երիտասարդական թեւի անդամ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Շահե արեղա Անանյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ եւ Բալթյան երկրների թարգմանիչների ու հրատարակիչների երրորդ համաժողովի առիթով Հայաստան ժամանած Ռուսաստանի գրողների միության Մոսկվայի կազմակերպության վարչության քարտուղարներ Մաքսիմ Զամշեւին եւ Ալբերտ Օհանյանին:

Հանդիպման ընթացքում Ռուսաստանից ժամանած հյուրերը Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեցին միության Ա. Ս. Գրիբոյեդովի անվան հուշամեդալը:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Ռուսաստանի գրողների միության վարչության անդամներին եւ շնորհակալություն հայտնեց բարձր պարգեւի համար՝ այն նկատելով երկու հավատակից ժողովուրդների բազմադարյա բարեկամության արտահայտություն: Նորին Սրբությունը հաջողություններ եւ նորանոր ներշնչումներ մաղթեց գրողներին իրենց ստեղծագործական կյանքում:

Հանդիպմանը ներկա էր Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՍՎԵՐԴԼՈՎՍԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Սվերդլովսկի մարզային Դումայի նախագահ Նիկոլայ Վորոնինի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ԱԺ պատգամավոր Հայկ Սանոյանի:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ տարբեր մակարդակներում իրականացվող գործակցության համար, ինչպես նաեւ գնահատանք հայտնեց մարզային իշխանություններին հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատարության համար:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա սերտ կապերի, ինչպես նաեւ ժողովուրդների կյանքում Եկեղեցիների կարեւոր առաքելության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սևան գյուղի կամարակապ տանիքներ

รูปถ่ายร่วมกับผู้ว่าราชการจังหวัดนครพนม

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՏԱՐԵՑ ՍԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 11-ին, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ առընթերակայությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի ու Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների եւ թեմի հոգեւորականաց դասի, կատարվեց Սեւան քաղաքի նորակառույց եկեղեցու հիմքերի օրհնության արարողությունը, որին ներկա էին մարզային եւ տեղական իշխանությունների ներկայացուցիչներ եւ հարյուրավոր հավատավոր սեւանցիներ: Եկեղեցու բարերարներն են ֆրանսաբնակ Սարգիս Պետոյանը եւ Ալեն Մանուկյանը: Եկեղեցու ճարտարապետն է Արտակ Ղուլյանը:

Ամենայն Հայոց Հայրապետի ժամանումից եւ տարածքում կարճատեւ շրջայցից հետո սկսվեց հիմնօրհնեքի արարողությունը հոգեզմայլ շարականների եւ սաղմոսների երգեցողության ներքո: Ըստ Հայ Եկեղեցու հնավանդ ծիսակարգի՝ նախ ջրով, ապա գինով լվացվեցին եկեղեցու հիմքերում զետեղվելիք 16 քարերը՝ 12 առաքյալների, 4 ավետարանիչների եւ Ս. Գրիգոր Լուսավորչի անուններով, որից հետո Վեհափառ Հայրապետն ու նրան առընթերակա եպիսկոպոսները Ս. Մյուռոնով օծեցին եկեղեցու հիմքերի քարերը:

Սրբազան արարողությունից հետո իր սրտի խոսքն ասաց եկեղեցու բարերար Սարգիս Պետոյանը: Նա շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ մեծ պատվի արժանացնելու համար հույս հայտնելով, որ նորակառույց եկեղեցին պիտի խթանի սեւանցիների հոգեւոր կյանքը եւ օրհնություն բերի նրանց ընտանիքներին: Բարերարից հետո խոսեց նաեւ Սեւանի քաղաքապետ Գեւորգ Մալխասյանը՝ իր ուրախությունը հայտնելով, որ վերջապես Սեւան քաղաքը կունենա իր աղոթատունը, որտեղ հայ մարդն իր աղոթքը կվերառաքի առ Աստված:

Վերջում ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Դիմելով հավաքված հարյուրավոր բարեպաշտ սեւանցիներին՝ Հայոց Հայրապետը նշեց, որ Աստծո ողորմածությամբ հաջորդ տարի հավատավոր սեւանցիները եւս կունենան իրենց սրբազան աղոթատեղին, որտեղ աղոթք կբարձրացնեն առ Աստված՝ հավատարիմ նախնյաց սրբազան հավատքին: Նորին Սրբությունը հորդորեց սեւանցիներին իրենց հայրերի նման հավատարիմ լինել Հայոց Եկեղեցուն, որպեսզի որեւէ թշնամի չկարողանա ներթափանցել նրանց հոգեւոր կյանքից ներս եւ շեղել ճշմարիտ, ուղղափառ հավատքից: Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարներ Սարգիս Պետոյանին եւ Ալեն Մանուկյանին, ինչպես նաեւ մարզային ու տեղական իշխանությունների ներկայացուցիչներին՝ ցուցաբերած աջակցության ու նախանձախնդիր վերաբերմունքի համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎԽ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԽՄԲԻ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հոկտեմբերի 12-15-ը Երեւանում անցկացվելիք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւրոպական տարածաշրջանային գործընկերների խմբի (ԵՏԳԽ) ժողովի մասնակիցներին: Խումբը, որ երկրորդ անգամ է իր հավաքն անցկացնում Հայաստանում, կազմված է Արեւմտյան Եւրոպայի էկումենիկ գործակալություններից եւ Արեւելյան Եւրոպայի Կլոր սեղաններից: Այս տարեկան հավաքների ընթացքում քննարկվում են Եկեղեցիների սոցիալական, դիակոնիկ եւ զարգացման աշխատանքների փորձն ու հեռանկարները:

Հանդիպմանը Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց հերթական հավաքը Հայաստանում կազմակերպելու առիթով, ապա իր գնահատանքը փոխանցեց ժողովի մասնակիցներին Արեւելյան եւ Արեւմտյան Եւրոպայում իրականացվող ԵՏԳԽ-ի կարեւոր առաքելության համար: Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայոց Եկեղեցու ծառայությանը ընկերային ոլորտում, որը մշտապես ընդարձակվում է նորանոր ծրագրերով: Այդ ոլորտում Նորին Սրբությունը կարեւորեց նաեւ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի գործունեությունը:

Հանդիպման ընթացքում ԵՏԳԽ-ի աշխատանքին, արդյունավետ համագործակցությանը Կլոր Սեղանների հետ անդրադարձան Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի ընդհանուր քարտուղար վեր. Քոլին Վիլյամսը, ԵՎԽ Եկեղեցիների եւ էկումենիկ հարաբերությունների համակարգման գրասենյակի ղեկավար հայր Դանիել Բուդան եւ հայաստանյան Կլոր սեղանի տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը:

ԵՏԳԽ-ի այս տարվա ժողովն անդրադառնալու է Արեւելյան Եւրոպայի համար մեծ կարեւորություն ունեցող մի շարք խնդիրների, ինչպես, օրինակ՝ աղքատություն, միգրացիա, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, մարդավաճառություն, ինչպես նաեւ եւրոպական Կլոր սեղանների դերը փոփոխվող աշխարհում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՔԱՍԼԻՔԻ «ՍՈՒՐԲ ՀՈԳԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Հոկտեմբերի 12-14-ը Լիբանանի Քասիլիքի «Սուրբ Հոգի » համալսարանին մէջ տեղի ունեցաւ գիտաժողով «Սուրբ Գրիգոր Նարեկացին եւ Եկեղեցւոյ ծիսակատարութիւնները» խորագիրով, կազմակերպութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Պատրիարքութեան:

Ժողովի հանդիսավոր բացումը կայացաւ նախագահութեամբ Ն.Ա.Տ. ԺԹ Կաթողիկէ Հայոց Պատրիարքին եւ Ն.Ա.Տ. Նասրալլահ Սֆէյր Մարոնի Պատրիարքին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ այս ժողովին իր մասնակցութիւնը բերաւ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը եւ փոխանցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնութիւնն ու պատգամը:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄԻ

ԱՊՀ եւ ԲԱԼԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի պատրիարքության Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակում գումարվեց ԱՊՀ եւ Բալթյան երկրների Քրիստոնեական միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի քարտուղարության նիստ:

Ժողովի ընթացքում քարտուղարության անդամները քննարկեցին Քրիստոնեական միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի գործունեության հեռանկարները: Քննության առնվեցին մի շարք հասարակական հիմնախնդիրներ, ինչպես, օրինակ՝ արհեստական վիժում, ինքնասպանություն, թմրամոլություն, հարբեցողություն, եւ որոշվեց միջոցներ ձեռնարկել այդ երեւույթների դեմ պայքարելու համար:

Որոշում ընդունվեց նաեւ 2010 թվականին Քրիստոնեական միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի ընդլայնված կազմով ժողով գումարել «Քրիստոնեական ընտանիքը՝ փոքր եկեղեցի եւ առողջ հասարակության հիմք» թեմայով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Քրիստոնեական միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի քարտուղարության անդամ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ԿԼՈՐ ՍԵՂԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հովանու ներքո գործող Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան «Կլոր Սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի 2009 թ. տարեկան հաշվետու ժողովը: Ժողովը նախագահում էին հիմնադրամի հոգաբարձուների

խորհրդի նախագահ, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը եւ հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը:

Ժողովին «Հայաստանը եւ տարածաշրջանը. հնարավոր սցենարներ» բանախոսությամբ հանդես եկավ Ազգային եւ միջազգային ուսումնասիրությունների հայաստանյան կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը: Զեկուցմանը հաջորդեց Կլոր Սեղանի 2008-2009 թթ. գործունեության հաշվետվությունը: Հիմնադրամի աշխատակիցները ներկայացրեցին հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը համայնքային համապարփակ զարգացման, կարողությունների զարգացման եւ տարածաշրջանային խաղաղության հաստատման ուղղությամբ:

Տեղի ունեցավ նաեւ կատարված աշխատանքի արժեւորում: Մասնակիցները անդրադարձան հիմնադրամի տարբեր ծրագրերին՝ քննարկելով Կլոր Սեղանի հետագա գործունեության ռազմավարությունը, հիմնադրամի ծրագրերի աշխարհագրական ընդգրկումը եւ առաջադրելով նոր ուղղություններ հիմնադրամի սոցիալական սպասավորության եւ եկեղեցական ու հասարակական այլ կառույցների հետ համագործակցության ընդլայնման համար:

Ժողովը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ հիմնադրամի նոր նախագահ նշանակված Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի եւ տիար Կարեն Նազարյանի ամփոփիչ խոսքերով:

Տարեկան ժողովին ներկա էին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնադրամի հայաստանյան գործընկերները՝ Հայոց Եկեղեցու թեմական առաջնորդներ ու ծխական քահանաներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների պաշտոնյաներ եւ այլուր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՍԻԱԿԱՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԴԱՍԸՆԹԱՑ ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ

Հոկտեմբերի 19-ից 29-ը Կալկաթայում ընթացան Ասիական քրիստոնեական կոնֆերանսի էկումենիկ ծրագրի 2009 թ. դասընթացները «Միասին ապրել Աստծո տան մեջ» թեմայով, որին մասնակցում են ասիական երկրների քրիստոնեական եկեղեցիների եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ: «Ասիական քրիստոնեական կոնֆերանսի» հրավերով առաջին անգամ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից դասընթացին մասնակցում եւ Հայոց Եկեղեցին ներկայացնում էր Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն արժանապատիվ Տ. Ավետիս քհն. Համբարձումյանը: Ծրագիրն ընդգրկում էր նաեւ այցելություն եւ ծանոթություն տարածաշրջանի տարբեր Եկեղեցիներին, այդ թվում նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Հոկտեմբերի 25-ին ծրագրի ղեկավարներ դոկտ. Հոպ Ս. Անտոնի եւ դոկտ. Լոնգչար Վատիյի գլխավորությամբ մասնակիցներն այցելեցին Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի՝ ներկա գտնվելու Սուրբ Պատարագին եւ ավելի մոտիկից ծանոթանալու Հայ եկեղեցուն: Օրվա պատարագիչն էր Տեր Ավետիս քահանան: Նախքան Պատա-

բագի սկսվելը Տեր հայրը բարի գալուստ մաղթեց հյուրերին՝ նշելով, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նույնպես մասնակցում եւ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում էկումենիկ շարժմանը՝ ձգտելով առավել սերտ կապեր հաստատել քրիստոնեական քույր Եկեղեցիների եւ հարանվանությունների հետ: Դատարագի ավարտին հյուրերը առիթ ունեցան նաեւ զրուցելու Հայոց Մարդասիրական ճեմարանի սաների հետ եւ ծանոթանալու նրանց առօրյային:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՉԵՆՆԱՅԻ (ՄԱԴՐԱՍ) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

2012 թ. Հայ Մադրասի 300-ամյակին նվիրված միջոցառումներին ընդառաջ՝ սույն թվականի հոկտեմբերի 20-ին հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն արեղա Հովհաննիսյանը, Կալկաթայի Ս. Նազարեթ Մայր եկեղեցու վարչության ատենապետ Մայքլ Դաթը, անդամներ Սյուզան Ռուբենը եւ Սունիլ Սոբթին մեկօրյա այցելություն կատարեցին Մադրասի Ս. Մարիամ Աստվածածին պատմական եկեղեցի՝ կառուցված 1712 թվականին:

Ներկաների մասնակցությամբ կատարվեց հանգստյան ժամերգություն, որին հաջորդեց հոգեհանգստյան կարգ՝ հայ պարբերական մամուլի անդրանիկ ամսագրի՝ «Ազդարարի» խմբագիր Տ. Հարություն ավագ քահանա Շմավոնյանի համար, որի գերեզմանը գտնվում է եկեղեցու բակում:

Այնուհետեւ տեղի ունեցավ եկեղեցական վարչության ժողով, որտեղ քննարկվեց Հայ Մադրասի 300-ամյակի առիթով նախատեսվող տոնախմբությունների ծրագիրը: Ժողովը նաեւ կարեւոր եւ առաջնային խնդիր համարեց տարիներ առաջ օտարված եկեղեցապատկան հարակից շինությունը վերադարձնել Հայոց Եկեղեցուն մինչ հոբելյանական տարին:

Հանդիպմանը մասնակցում էր նաեւ Հայոց Մարդասիրական ճեմարանի հայոց պատմության ուսուցչուհի Հերմինե Ադամյանը: Հոգեւոր հովվի նախաձեռնությամբ տիկին Ադամյանը սպանձնեց մինչ 2012 թ. պատրաստել ծավալուն աշխատություն՝ նվիրված Հայ Մադրասի պատմությանը:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարար տիար Արմեն Աշոտյանի, տեղի ունեցավ Մայր Աթոռի հովանու ներքո արդեն 8-րդ տարին անցկացվող «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի հանդիսավոր մրցանակաբաշխությունը:

«Հայոց լեզու եւ գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց Եկեղեցու պատմություն» եւ բնագիտական առարկաների գծով անցկացվող մրցույթի նպատակն է բացահայտել, գնահատել եւ խրախուսել մասնագիտական իմացը գիտելիքներով, ստեղծագործական եւ դասավանդման հմուտ կարողություններով օժտված ուսուցիչներին: Մրցույթն անց

է կացվում Մայր Աթոռի բարերարներ ամերիկաբնակ Սիլվա եւ Իրմա Տեր-Ստեփանյան քույրերի հովանավորությամբ:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան արեղա Նավասարդյանի ողջույնի խոսքը: Հայր Սուրբը, բարի գալուստ մաղթելով կրթության մշակներին, անդրադարձավ ուսուցչի կերպարին ու նկարագրին, նրա քրիստոսանման առաքելությանը հայոց ազգային դպրոցից ներս: Հայր Վարդանն ուրախություն հայտնեց, որ Վեհափառ Հայրապետի՝ ազգային ու բարոյական արժեքների, հայրենասիրության ոգու վրա հիմնված ազգային դպրոց ունենալու եւ դրանում ուսուցչի կարեւոր դերակատարության արժեւորման տեսլականը տարեցտարի իրականություն է դառնում:

Մրցույթի անցկացման գործընթացը ներկայացրեց ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթական վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը՝ տեղեկացնելով, որ մրցույթին մասնակցել է 300 ուսուցիչ, որոնցից 41-ն անցել են եզրափակիչ փուլ:

Այնուհետեւ մրցույթի հաղթողներին շնորհավորեց ՀՀ կրթության եւ գիտության նախարար տիար Արմեն Աշոտյանը: Իր խոսքում նախարարը կարեւորեց դպրոցի կրթադաստիարակչական դերը, ապա անդրադարձավ նախարարության սերտ համագործակցությանը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ եւ համատեղ իրագործվող ծրագրերին: «Արդիականացնելով կրթությունը եւ համապատասխանեցնելով այժմյան պայմաններին՝ չպետք է մոռանանք, որ մեր նման երկրների ու ժողովուրդների համար թիվ մեկ մարտահրավեր է նաեւ ազգային ինքնության պահպանումն ու հոգեւոր-մշակութային դաստիարակությունը, որի իրականացման գործում բացառիկ առաքելություն ունի Հայ Առաքելական Եկեղեցին՝ ամրագրված սահմանադրորեն: Հայոց կրթության բազմադարյա պահապանը եւ հովանավորը եղել է Հայոց Եկեղեցին»,-նշեց ՀՀ ԿԳ նախարարը:

Ապա Մայր Աթոռի միաբան, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը եւ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը 39 ուսուցիչների հանձնեցին մրցույթի մասնակցության վկայականներ, դրամական պարգեւներ եւ հոգեւոր գրականություն:

Առաջին մրցանակի արժանացան «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցչուհի Խաչատրյան Աստղիկը (Գյումրիի թիվ 11 դպրոց), «Հայոց լեզվի եւ գրականություն» առարկայի ուսուցչուհի Մարգարիտա Խաչատրյանը (Վանաձորի թիվ 5 դպրոց), «Հայոց պատմություն» առարկայի ուսուցչուհի Հասմիկ Գափլանյանը (Վաղարշապատի թիվ 2 դպրոց) եւ «Կենսաբանություն» առարկայի ուսուցչուհի Անահիտ Գեւորգյանը (Հրազդանի թիվ 11 դպրոց): Երկրորդ մրցանակ ստացավ 8 ուսուցիչ, երրորդ մրցանակ տրվեց 11 ուսուցչի: Մրցանակների արժանացան մրցույթի մասնակից եւս 16 ուսուցիչ:

Հայոց ուսուցչի մեծարման գեղեցիկ այս արարողությունից հետո իրենց սրտի խոսքն ասացին մի շարք ուսուցիչներ: Վերջում Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը ներկաներին փոխանցեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը. «Օրհնյալ է ուսուցչի գործը. մեր Տեր Հիսուս Քրիստոսի գործի նման է, որովհետեւ Ինքն էլ Վարդապետ՝ ուսուցիչ եղավ: Հետեւաբար, օրհնյալ է ուսուցչի աշխատանքը, որ մարդ կերտելու գործն է: ...Աշխարհը պիտի փրկի

կրթությունը»,- ասաց Սահակ Սրբազանը՝ հորդորելով ուսուցիչներին շարունակել իրենց ծառայությունը, խղճմտանքով ցանել սերմերը կրթության, որպեսզի Հայոց աշխարհը եւ Սփյուռքը ողողվի հայկական մշակույթի, հայոց գրի ու գրականության լույսով եւ Աստծո օրհնությամբ:

Արարողության ընթացքում հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով հանդես եկավ Ս. Գեղարդի վանքի երգչախումբը՝ խմբավարությամբ Անահիտ Պապայանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲԱՑՎԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ

Օրեր առաջ Հարավային Ռուսաստանի հայոց թեմում կատարվեց թեմի առաջնորդարանի նորակառույց շենքի բացման արարողությունը՝ նախագահությամբ թեմի առաջնորդ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանի: Առաջնորդարանը կառուցվել է փիար Անդրեյ Ամոսովի ազնիվ բարերարությամբ:

Բացման արարողության ընթացքում Մովսես Սրբազանն իր մասնավոր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնեց ազնիվ բարերարին՝ վստահեցնելով, որ առաջնորդարանի շենքի կառուցումը նոր խթան կհանդիսանա թեմի աշխատանքների ընդարձակմանը եւ կնպաստի հոգեւոր առաքելության առավել արդյունավետ իրագործմանը:

Սրբազան Հայրը նաեւ քարոզ խոսեց «Ճանաչեք ճշմարտությունը, եւ ճշմարտությունը կազատի ձեզ» բնաբանով՝ մեծապես կարեւորելով մարդու կյանքում ապրվածճանաչողությունը եւ հոգեւոր-ազգային արժեքների կրող լինելու հանգամանքը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մի շարք միաբաններ, ավարտելով իրենց ուսումն արտերկրի տարբեր համալսարաններում եւ հովվական սպասավորությունը թեմերում, վերադարձել են Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ծառայության կոչվել Մայր Աթոռի տարբեր կառույցներում:

Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը, վերադառնալով Կանադայի Հայոց թեմից, ծառայության է կոչվել Մայր Աթոռի ֆինանսական բաժնում: Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը ավարտել է ուսումը Հունաստանում, նշանակվել Մայր Աթոռի հյուրընկալ: Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը (Աթենքի պետական համալսարան, Հունաստան) սպանձնել է Մայր Աթոռի Վանորեից տեսչի օգնականի պարտականությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ